13945

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«26» 11 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0213-21

Ձեռնարկողը՝ ***«Տոտեմ բիզնես կենտրոն» ՓԲ ընկերություն***
ք.Երևան, Աճառյան 40/34

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի, Ավան վարչական շրջանի Աճառյան փողոց 40/34 հասցեում գոյություն ունեցող արտադրական համալիրը բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի վերակառուցման շրջակա միջավայրի վրա աղդեցության նախնական գնահատման հայտ***
ք.Երևան, Ավան վարչական շրջան, Աճառյան 40/34

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի՝ պարտականությունները կատարող Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0213-21

<26> 11 2021թ.

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Աճառյան փողոց 40/34 հասցեում գոյություն ունեցող արտադրական համալիրը բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Տոտեմ բիզնես կենտրոն» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ, ք. Երևան, Ավան վարչական շրջան, Աճառյան փողոց հ.40/34

Ներածական մաս. Գործունեության նպատակն է կառուցել հասարակական նշանակության բազմաֆունկցիոնալ համալիրի: Համաձայն ՀՀ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 7-րդ ենթակետի, 1500 ք.մ և բարձր կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի կառույցներն ըստ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության, դասակարգվում են «Գ» կատեգորիայի: Նախագծվող բնակելի համալիրի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 19446.8 ք.մ, ուստի սույն նախագիծը և նախատեսվող գործունեությունը պահանջում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նախնական գնահատման հայտի պետական փորձաքննության և փորձագիտական եզրակացության ձեռք բերում:
Հասարակական նշանակության բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման աշխատանքները նախատեսվում է իրականացնել Ավան վարչական շրջանի Աճառյան փողոցի հ. 40/34 հողատարածքում:
Նախագծային աշխատանքների պատվիրատուն հանդիսանում է «Տոտեմ բիզնես կենտրոն» ՓԲԸ-Ն: Նախագիծը մշակվել է ՀՀ գործող շինարարական նորմատիվային պահանջների, և նախագծային աշխատանքների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի համաձայն:

Նկարագրական մաս. Նախատեսվում է Ավան վարչական շրջան, Աճառյան փողոց 40/34 հասցեում գոյություն ունեցող արտադրական համալիրը ընդլայնել, կառուցել մանսարդի հարկ և վերակառուցել բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի:

Համալիրը իր մեջ ներառում է, ինչպես վերակառուցվող, այնպես էլ նոր կառուցվող շինություններ: Նոր կառուցվող շինություններն են՝ ճաշարան, երկհարկանի մարզասրահ, խաղասրահ, երկհարկանի ավտոկայանատեղի՝ տանիքին բացօթյա կայանելու հատվածով, այգեպանի տնակ, պահակակետ:

Վերակառուցվող են՝ նախկին «Քարի և սիլիկատների գիտահետազոտական ինստիտուտ» 12 հարկանի շինությունը, որին նախատեսվում է ավելացնել ևս 1 հարկ, ինչպես նաև հյուսիս-արևելքում գտնվող արտադրական շինության մի հատված: 13 հարկանի շենքն իր մեջ ներառում է՝ գրասենյակային տարածքներ, խաղասրահ, հանդիպումների սրահներ, նիստերի դահլիճ, սրճարան, մանկապարտեզ, ադմինիստրատիվ տարածքներ, տեխնիկական հատվածներ, պահեստներ:

Մուտքային հատվածում նախատեսվում է շարժման սահմանափակումներ ունեցող անձանց համար թեքահարթակ:

Տարածքում առկա է ադմինիստրատիվ մասնաշենք 8493.6քմ, շինություն 951.4քմ, շինություն 107.3 քմ, շինություն 320.2 քմ, պահակատուն 14քմ:

Կից՝ 42-600մ հեռավորությամբ գտնվում են բնակելի, հասարակական և արտադրական շինություններով ծանրաբեռնված հողամասեր: Տարածքի մոտեցումներն ապահովված են Աճառյան փողոցից:

Բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի կառուցվում է ռելիեֆային տեղանքով հողամասի վրա, որից 4152.6քմ վարձակալություն, 15294.2քմ սեփականություն, կանաչապատման մակերես՝ 5835քմ, կառուցապատման մակերես՝ 13611.8քմ, այդ թվում ճեմուղի, հարթակներ և խճաքար, ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայակնի՝ նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակություն կամ հողատեսքը՝ հասարարական կառուցապատման:

ՈՒսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Նախկինում տվյալ տեղամասում մինչև 70 մետր խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել:

Համաձայն 23.09.2020թ կազմված հիմքերի համար բացված փոսորակների և խրամուղիների զննման ակտի հիմքերի հատակներում ընկած են բեկորային բազալտներ:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտ և ծառաթուփային բուսականություն բացակայում են, տվյալ տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան:

Բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության իրականացման տարածից դուրս բնական, տնտեսական միջին ինտենսիվ ներգրավվածություն չունեցող գործունեության չունեցող տարածքներում կարող են հանդիպել Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներ:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի շենքում էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացման նպատակով իրականացվելու են մի շարք միջոցառումներ մասնավորապես՝ ընդհանուր-փոխանակային օդափոխության համակարգերում ջերմության ռեկուպերացիայի հնարավորությամբ սարքերի ներդնում, որը թույլ է տալիս խնայել ավելի քան 70% ջերմային էներգիա ձմռանը և 65% սառեցման հզորություն ամռանը, որն անհրաժեշտ էր ծախսել օդի լավորակման և նորմալ միկրոկլիմա ապահովելու համար, շենքի ջերմային կորուստները նվազեցնելու նպատակով նախատեսվում է տեղադրել բարձր թերմիկ դիմադրություն ունեցող լուսամուտները, էներգախնայողության նպատակով իրականացվելու են կանաչ տանիքներ, նախատեսված է նաև մի շարք այլ միջոցառումներ:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ, որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտագործմամաբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

Շենքում նախատեսված է մեխանիկական դրդմամբ ընդհանուր փոխանակային օդափոխության համակարգ: Կատարվելու է նաև համակարգերի բաժանում ըստ նորմատիվային պահանջների և տարբեր միկրոկլիմայի պահանջների: Օդափոխվող սենքերի խմբավորումն ըստ օդամշակման սարքերի իրականացվելու է ըստ վերջիններիս նշանակության, միկրոկլիմայի պարամետրերի, այդ սենքերի շահագործման ռեժիմների, հրդեհային բաժանմունքերի և պայթյունահրդեհային վտանգավորության կատեգորիաների:

Տանիքը հարթ է, կազմակերպված ներքին ջրահեռացմամբ:

Բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին: Ջրամատակարարաումը նախատեսվում է տարածքի ետնամասով անցնող D=200 մմ ջրագծից, իսկ հեղեղատարը D=700 մմ Աճառյան փողոցով անցնող հեղեղատարից:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով Երևան քաղաքի տեխնիկական ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը 120 Կվա ծախսով կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում: Հիմքերի ամրապնդման համար կատարվելու է մոտ 500խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որը կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն, որը ներդաշնակ է լինելու տվյալ միջավայրի շրջակա կառույցներին:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝ Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիակայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները և ռիսկերը կապված են նաև արտանետումների հետ, որոնք են.

- փոշու արտանետումներ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման ընթացքում,
- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում,

- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx) և այլն:

Ըստ ազդեցության աստիճանի և ինտենսիվության՝ շրջակա միջավայրի վրա բոլոր բացասական ազդեցությունները և ռիսկերը գնահատվում են մինիմալ և կառավարելի գործունեության ընթացքում՝ հաշվի առնելով նախատեսվող շինարարական աշխատանքների ծավալը և բնույթը, ինչպես նաև հեռավորությունը զգայուն ազդակակիրներից: Նշված ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով նախատեսվող գործունեության տեղամասը:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական և վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման համար նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք են.

1. Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար.
- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգաորման իրականացում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխման իրականացում փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը,
- շինարարության ընթացքում համաձայն մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի, փոշեգոյացումը և անվտանգության ապահովման նպատակով շենքերի անթափանց թաղանթով ծածկում:
2. Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.
- ջրցանի ծավալների այնպիսի հաշվարկի կատարում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և ջուրը կբավականացնի միայն փոշենստեցման համար, այդ թվում նաև անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզարան, որը գտնվում է շինարարական հրապարակին կից, որտեղ տեղի կունենա մեխանիկական նստեցում, այնուհետև պարզեցված ջուրի կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածը կհեռացվի որպես շինաղբ:
3. Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.
- շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, այդ տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ ապահովվում, ինչպես նաև ժամանակակից տեխնիկականն միջոցների կիրառում,
- աշխատանքների ավարտից հետո բոլոր տարածքների մաքրում և առաջացած թափոնների տեղափոխում ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր:

Նախատեսվում է կատարել կանաչապատման աշխատանքներ ևս, որի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 560խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման

նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության համաձայնեցմանը: Տարածքում նախատեսվում է տնկել.

- թխկի սրատերև կարմիր - 36 հատ,
- գնդաձև իլենի 19 հատ,
- սյունաձև թույա – 38 հատ,
- սակուռա – 12 հատ,
- բարբարիս – 8 հատ,
- ասպիրակ – 17 հատ,
- ֆորզիցիա – 42 հատ,
- խենոմելես – 11 հատ,
- լաբոռնում անագիրատերև - 16 հատ,
- եղևնի կովկասյան – 12 հատ:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և շինարարական, այդ թվում տարածքում առկա արտադրական և օժանդակ շինությունների քանդումից առաջացող աղբը, որը ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝ հրդեհի առաջացումը, հեղուկ նյութերի արտահոսքը, աշխատողների վնասվածքները, շահագործվող տեխնիկայի հետ վթարները և այլն, որոնց առաջացումը կանխարգելելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝ հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում հրշեջ հիդրանտի նախատեսում տեղադրում), մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակի և տրանսպորտային միջոցների հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-արկղիկով հագեցում, աշխատողների դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում, մշտապես շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար, հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները միշտ ազատ լինելու անհարժեշտություն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ տեղադրում, շինարարական աշխատանքների տեղամասերում հրդեհաշիջման սկզբնական միջոցների տեղադրում, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ փակցնում և այլն: Ինչպես նաև նախատեսվում է հեղուկ նյութերի տեղափոխում շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու նպատակով, բոլոր աշխատողներին անհատական պաշտպանության միջոցների տրամադրում և այլն:

Նախատեսվող գործունեության տարածքում աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքների և տրանսպորտի տեղաշարժի կազմակերպում ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների կիրառում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում,

- տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչների պարբերաար ստուգում և կարգավորում և այլն:

Շինհրապարակում և հարակից տարածքներում մոնիթորինգի իրականացումը հնարավորություն կտա հսկելու շինարարական աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի, կամ հարակից տարածքների վրա՝ վնասակար ազդեցությունների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Մոնիթորինգի իրականացման հիմնական նպատակն է ստեղծել տեղեկատվություն միջավայրի փոփոխությունների մասին: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդը աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ,
2. փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանի իրականացում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
4. աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
5. շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
6. կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպության կողմից հետևողականություն տնկված ծառերի աճի և խնամքի համար: Ծառերի տնկումից հետո մոնիթորինգ իրականացում և աճի միտում չունեցող ծառերի փոխարինում նորերով:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները իրականացվելու է պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Ամբողջ շինարարաության ընթացքում բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների համար նախատեսվում է հատկացնել 1960000 դրամ:

Պատճառաբանական մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», Երևանի Աջափնյակ վարչական շրջանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15 հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
3. Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումները իրականացնել՝ համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018 N426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների:
4. Տարածքի կանաչապատման նախագիծը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչություն՝ հաստատման և աշխատանքները իրականացնել համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության կողմից հաստատված կանաչապատման նախագծի, որտեղ անհարաժեշտ է ներակայված լինի ներքին ոռոգման ցանցը:
5. Համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից 02.11.2021թ. տրված N 01/18-07/2-127983-957 ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ ապահովել հողամասի առնվազն 30% և ավելի կանաչապատման տարածք զրոյական նիշում (առանց ստորգետնյա կառուցապատման):
6. Վերջնական նախագծում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:
7. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
8. Բոլոր տիպի շինարարական աշխատանքները իրականացնել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:
Շինարարության ընթացքում անհրաժեշտ է նաև իրականացնել՝

- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահել շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով,
- ծածկել շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը,
- ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնել բերելով հնարավորինս սկզբնական վիճակի,
- աղմկահարույց աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերի,
- նախատեսվող գործունեության ընթացքում առաջացող բանեցված կապարե կուտակիչները, դողակուտակիչները, բանեցված շարժիչների յուղերը և իրենց սպառողական

հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդները հեռացնել շին հրապարակից սահմանված կարգով, ինչպես նաև իրականացնել վերը նշվածներից տարածքը աղտոտումից զերծ պահելու բնապահպանական միջոցառումներ,

- ծառերի և թփերի տնկման վայրը և քանակը համապատասխանեցնել կանաչապատման նախագծին, ապահովել ծառերի և թփերի 90% կպչողականություն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:

Հաշվետվությունում առկա առաջարկվող մեղմացնող միջոցառումները ընդունել պարտադիր կատարման ենթակա:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Երևան քաղաքի, Ավան վարչական շրջան Աճառյան փողոց հ. 40/34 հողատարածքում գոյություն ունեցող արտադրական համալիրը բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է փորձաննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ն. Նասիբյան